



ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ (Լ Ր Ա Ց Ո Ւ Մ)

«Էջմիածին» ամսագրի 1966 թ. ԺԱ.—ԺԲ միացյալ համարում տպագրված են Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ¹, այդ թվում՝ նաև հիշյալ գրքի

խՆ գլուխը: Վերջինիս 4—9 տները տպագիր բնագրում պակասում են: Մատենադարանի № 5608 ձեռագրի հիման վրա հրապարակում ենք պակասող տները.

- 4 Հաստովք և հեզութեամբ նորա սիրեաց զնա²,
Ընտրեաց զնա յամենայն մարմնոց:
- 5 Լսեցոյց նմա զձայն իւր
Եւ էմոյծ զնա ի մէզն:
- 6 Եւ ետ նմա յայտ յանդիման պատուիրանս,
Աւրէնս կենաց և հանճարոյ,
Ուսուցանել Յակոբայ զուխտ նորա³
Եւ գիրաւունս նորին⁴ Իսրայելի:
- 7 ԶԱհարոն բարձրացոյց զսուրբն նման նորա⁵
Զեղբար նորա ի տոհմէն Դևեայ,
Հաստատեաց նմա ուխտ յաւիտենից.
Եւ ետ նմա ուխտ քահանայութեան ժողովրդեանն:
Երանելի արար զնա քաջազարդութեամբ
Եւ զգեցոյց⁶ նմա պատմութեան փառաց:
- 8 Ագոյց նմա կատարումն պարծանաց
Եւ հաստատեաց զնա անաւթ զարդութեան՝
Անդրաւարտիս և պնդնաւոր և թիկնանոց
- 9 Եւ պատեաց⁷ զնա նոնաձեւաք,
Ոսկի զանգակաք լուլիւք շուրջնակի,
Հնչել զձայն ի քայլս նորա,
Լսելի առնել հնչիւն ի տաճարի
Ի յիշատակ որդւոց ժողովրդեան նորա:

¹ Գևորգ Աբգարյան, Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ:—«Էջմիածին», 1966, հ. ԺԱ.—ԺԲ, էջ 59—70: Զոհրապյանի և Բազրատունու հրատ. Սիրաքի գրքի գլ. ԺԸ, տ. 30—գլ. Ի, տ. 26 նույնության մասին տես՝ Ծովական, Սիրաքայ հին հայ թարգմանությունները—«Սիրուն», 1936, № 5, էջ 152:

² Զեռագրում՝ սրբեաց փխ. սիրեաց զնա:

³ Զեռագրում չիք նորա: Վերականգնում ենք ըստ Երոսաղեմի ձեռագրի: Տես Դուրյան, Ե, նորագիտ գլուխներ Սիրաքայ գիրքին հին թարգմանությունները:—«Սիրուն» 1927, էջ 248:

⁴ Զեռագրում՝ նմին փխ. նորին:

⁵ Զեռագրում՝ նմա փխ. նորա:

⁶ Զեռագրում՝ զգեցոյց:

⁷ Զեռագրում՝ պատեալ:

